

Ի գիտություն լրատվամիջոցների

Ձեզ ենք ներկայացնում համառոտ տեղեկանք 2011 թ. հունվարի 1- հոկտեմբերի 1-ն ընդգրկող ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմ ստացված քաղաքացիների առաջարկությունների, դիմումների ու բողոքների թվաքանակի և դրանց քննարկման ընթացքի, ինչպես նաև ՀՀ կառավարության թեժ գծով ստացված քաղաքացիների բողոքների (հարցերի) բնույթի, թվաքանակի և դրանց քննարկման ընթացքի վերաբերյալ:

Նշված ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմ է ստացվել 4489 առաջարկություն, դիմում և բողոք: Քննարկման արդյունքում համապատասխան հանձնարարականներով կատարման է ուղարկվել 4027-ը, որից վերահսկողություն է սահմանվել 396 հանձնարարականի կատարման նկատմամբ: 2011 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ստացվել է 378 պատասխան, որոնցից 112-ին տրվել է դրական լուծում /սահմանված ժամկետում ընթացքի մեջ է գտնվում 18 դիմում/:

	ստացված դիմումների քանակը	ուղարկված դիմումների քանակը	հսկողական			
			ընդամենը	ստացվել է պատասխան	տրվել է դրական լուծում	սահմանված ժամկետում ընթացքի մեջ է
Ընդամենը	4489	4027	396	378	112	18

2011 թ. հունվարի 1-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ կառավարության աշխատակազմում իրականացվել է 2485 քաղաքացու և 98 բողոք-պահանջ ներկայացնող կոլեկտիվների ընդունելություն: Պարզաբանումներ են տրվել բարձրացված հարցերի վերաբերյալ, տեղում կատարվել են ուսումնասիրություններ, առանձին դեպքերում օպերատիվ միջամտություն է ցուցաբերվել հրատապ նշանակություն ունեցող հարցերի լուծման նպատակով: Հարկ է նշել, որ նաև սահմանված կարգով հսկողություն է իրականացվել հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների կողմից ներկայացված ժամանակացույցին համապատասխան քաղաքացիների ընդունելության կատարման նկատմամբ:

12.10.2011

2011 թ. հունվարի 1-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ կառավարության թեժ գծով քաղաքացիների կողմից ստացվել է 9363 փաստացի զանգ, որից՝

- 893-ին զրույցի ընթացքում տրվել է պարզաբանում
- 8470-ը /բողոքներ, առաջարկություններ/ սահմանված կարգով համառոտագրվել և ներկայացվել է քննարկման, ընդ որում՝ դրանք վերաբերում էին վարորդական իրավունքի (2340), ավտոտեխսպասարկման (2264), սոցիալական (943), հարկաբյուջետային (724), սեփականության չափագրման (506), առողջապահության (480), բիզնեսի գրանցման (356), գազիֆիկացման և ջրամատակարարման (234), քաղաքաշինական (112), կրթության (102), աշխատանքի և չվճարված աշխատավարձի (98), անձնագրերի և գրանցման հետ կապված խնդիրներին (16), ինչպես նաև այլ բնույթի հարցեր (295):

Քննարկման արդյունքում գրանցված հարցերից 217-ին քաղաքացուն պատասխան է ուղարկվել hotline@gov.am էլեկտրոնային հասցեից, իսկ 247-ը քննության առնելու և ձեռնարկված միջոցառումների մասին հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկատվություն ներկայացնելու հանձնարարականով ուղարկվել է իրավասու պետական մարմիններ: 247 ուղարկված հարցերից տեղեկատվություն է ստացվել 202-ի վերաբերյալ, որից 89-ը՝ լուծման դրական արդյունքով /սահմանված ժամկետում ընթացքի մեջ է 45 հարց/: